ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2651 - Ա **14 ապրիլի 2009թ.**

ԷՄԻՆԵՎՍԿՈՒ ՓՈՂՈՑԻ Հ. 20 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԱՀԱՊԵՏԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ, ՄԱՐՈՒՍՅԱ ԵՊՈՒՊԱՆԻ ԱԼԹՈՒՆՅԱՆԻ, ՌՈԶԱ ՀԱԿՈԲԻ ԱԼԹՈՒՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Հովհաննես Նահապետի Հակոբյանի (ծնված 10.06.1922թ.), Մարուսյա Եպուպանի Ալթունյանի (ծնված 21.03.1930թ.), Ռոզա Հակոբի Ալթունյանի (ծնված 18.03.1955թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Էմինևսկու փողոցի հ.20 հասցեում Հովհաննես Նահապետի Հակոբյանին, Մարուսյա Եպուպանի Ալթունյանին, Ռոզա Հակոբի Ալթունյանին պատկանող օրինական հողամասին կից օգտագործվում է 80.08քմ մակերեսով հողամաս, որը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, Երևանի Արաբկիր և Քանաքեռ–Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 17.04.2008թ. 2-303 վճիռը, 30.03.2006թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, Երևանի քաղաքապետարանի <<Հողի ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 28.11.2008թ. հ.20/2-Ե/354 գրությունը, Երևանի քաղաքապետարանի <Քաղաքաշինություն>> ՊՓԲԸ-ի 20.11.2008թ. հ.20-Ել-1441 եզրակացությունը, համաձայն որի Էմինևսկու փողոցի հ.20 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Էմինևսկու փողոցի հ.20 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Հովհաննես Նահապետի Հակոբյանի, Մարուսյա Եպուպանի Ալթունյանի, Ռոզա Հակոբի Ալթունյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական հողամասին կից 80.08քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 80.08քմ մակերեսով հողամասի (որից 21.28քմ մակերեսով հողամասը Հովհաննես Նահապետի Հակոբյանի, Մարուսյա Եպուպանի

Ալթունյանի, Ռոզա Հակոբի Ալթունյանի ընդհանուր համատեղ սեփականություն է, իսկ 58.8քմ մակերեսով հողամասը Մարուսյա Եպուպանի Ալթունյանի, Ռոզա Հակոբի Ալթունյանի սեփականություն է) և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված գլխավոր հատակագծով։

4. Ռադիշևի փողոցի հ.20 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Էմինևսկու փողոցի հ.20 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Հովհաննես Նահապետի Հակոբյանի, Մարուսյա Եպուպանի Ալթունյանի, Ռոզա Հակոբի Ալթունյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Քանաքեռ-Զեյթուն թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ